



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No _____

« _____ » _____ 2024 թ.

**«ՀԱՅԵՐԵՆԸ ՈՉ ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ՍՏՈՒԳՈՒՄ
ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ, «ՀԱՅԵՐԵՆԸ ՈՉ ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ.
ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ, «ՀԱՅԵՐԵՆԸ ՈՉ ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ.
ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ ՄՇԱԿՈՂ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» 56-րդ կետը և ղեկավարվելով «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի 661-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 10-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերով, 28-րդ կետի 10-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հաստատել՝

1) «Հայերենը ոչ հայախոսների համար. հայերենի ուսուցում, ստուգում և գնահատում» ծրագիրը՝ ըստ 1-ին հավելվածի.

2) «Հայերենը ոչ հայախոսների համար. հայերենի ուսուցում, ստուգում և գնահատում» ծրագրի միջոցառումների պլանը՝ ըստ 2-րդ հավելվածի.

3) «Հայերենը ոչ հայախոսների համար. հայերենի ուսուցում, ստուգում և գնահատում» ծրագիրը մշակող մասնագիտական խմբի անհատական կազմը՝ ըստ 3-րդ հավելվածի:

2. Լեզվի կոմիտեին՝ ապահովել սույն հրամանի կատարումը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 1-ից:

 Recoverable Signature

X 

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԵՐԵՆԸ ՈՋ ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Հայերենը ոչ հայախոսների համար. հայերենի ուսուցում, ստուգում և գնահատում ծրագիրը (այսուհետև՝ Ծրագիր) հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգ է՝ նախատեսված ոչ հայախոսների համար, որոնք ցանկանում են սովորել հայերեն և կիրառել այն կյանքի տարբեր (աշխատանքային, գիտա-կրթական, կենցաղային և այլ) ոլորտներում: Ծրագրի հիմնական մասը ներառում է հայերենի իմացության մակարդակների ստուգման ու գնահատման համակարգի ստեղծումն ու այն ներդնելու մեխանիզմների մշակումը, ինչը թույլ կտա Հայաստանի Հանրապետության տարածքում և դրանից դուրս ցանկացած անձի ստուգել հայերենի իմացությունն ու ստանալ հավաստագրված վկայական:

1. ՀԱՅԵՐԵՆԻ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2. Հիմք ընդունելով Եվրոպական խորհրդի լեզուների իմացության ու գնահատման ընդհանուր շրջանակի վերջին թարմացումը ([Common European Framework of Reference for Languages](#)) և նույն շրջանակի «Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում» հայերեն տարբերակը (Երևան, 2005)՝ նախատեսվում է ստեղծել հայերենի առանձնահատկություններից բխող հայերենի ուսուցման, գնահատման և ստուգման վեցաստիճան (համապատասխանաբար՝ Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) համակարգ:

2. ԾՐԱԳՐԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

3. Ծրագրի բաղկացուցիչներ են՝

1) հայերենի իմացությունը նշող մակարդակների՝ Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2) նկարագրիչները.

2) յուրաքանչյուր մակարդակին համարժեք գրելու, կարդալու, խոսելու և լսելու կարողությունները ուսուցող, ստուգող և գնահատող համակարգը.

3) ծրագրի շրջանակում օգտագործվող և հետագայում շրջանառվող հիմնական հասկացությունների եռալեզու բառարանը (հայերեն-անգլերեն-ռուսերեն).

4) հայերենի իմացությունն ուսուցող, ստուգող և գնահատող հարցերի թարմացվող առցանց շտեմարանը.

5) համակարգից օգտվելու կարգը և դրան համապատասխան օգտվելու ուղեցույցը,

6) համակարգի գործարկմանը վերաբերող իրավական կարգավորումները.

7) ծրագրի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ այլ նյութեր:

4. Լեզվի իմացությունը նշող մակարդակների նկարագրիչները, յուրաքանչյուր մակարդակին համարժեք գրելու, կարդալու, խոսելու և լսելու կարողությունները գնահատող համակարգը, ծրագրի շրջանակում օգտագործվող և հետագայում շրջանառվող հիմնական հասկացությունների եռալեզու բառարանը (հայերեն-անգլերեն-ռուսերեն) մշակում է հայ լեզվաբաններից և հայերենը որպես օտար լեզու դասավանդող

մասնագետներից բաղկացած մասնագիտական խումբը: Մշակված փաստաթղթերը փորձաքննության անցնելով հաստատում է Լեզվի կոմիտեն:

4. Ծրագրի շրջանակում օգտագործվող և հետագայում շրջանառվող հիմնական հասկացությունների եռալեզու բառարանը (հայերեն-անգլերեն-ռուսերեն) փորձաքննում և թողարկման է երաշխավորում է Լեզվի կոմիտեն:

5. Հայերենի իմացության մշակված չափորոշիչներին համապատասխան առաջադրանքների շտեմարանը ստեղծում է հայերենի մասնագետներից բաղկացած խումբ(եր)ը, երաշխավորում մասնագիտական խմբի ղեկավարը և Լեզվի կոմիտեն:

6. Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների շտեմարանը տեղադրվում է ծրագրի համար պատրաստված կայքում: Կայքը պատրաստում է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, երաշխավորում Լեզվի կոմիտեն: Կայքը թարմացվում է մշտապես:

7. Համակարգին վերաբերող իրավական կարգավորումները մշակում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Լեզվի կոմիտեն:

8. Համակարգից օգտվելու կարգը և օգտվելու ուղեցույցը մշակում է Լեզվի կոմիտեն:

9. Համակարգը գործելու է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունից դուրս:

10. Հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգով հայերենի իմացությունն ստուգող քննություններ կարող են իրականացնել հայերենի ուսուցում իրականացնող լիցենզավորված պետական և ոչ պետական կազմակերպությունները՝ ապահովելով համապատասխան պայմաններ (քննության համար անհրաժեշտ սարքավորումներով հագեցած սենյակ/ներ, հսկող սարքեր, կապի միջոցներ և այլն):

11. Հայերենի ուսուցում իրականացնող լիցենզավորված պետական և ոչ պետական կազմակերպությունների՝ հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգով հայերենի իմացությունն ստուգող քննություն իրականացնելու լիցենզիան կարող է վերանայվել հաշվի առնելով լիցենզիայի պայմանները և Ծրագիրն իրականացնող մարմնի սահմանած չափորոշիչները:

3. ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԵՎ ՍՏՈՒԳՈՂ ՀԱՐԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ

12. Ըստ հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման մշակված չափորոշիչների՝ խրախուսել նաև հայերենի ուսուցմանը նպաստող ուսումնաօժանդակ նյութերի և հայերենի իմացությունն ստուգող այլ միջոցների ստեղծումը, ինչպիսիք են՝

1) տարիքային տարբեր խմբերի հետաքրքրությունները բավարարող (դպրոցահասակ և ոչ դպրոցահասակ) լեզվական տարբեր մակարդակների իմացությունն ուսուցող ադապտացված բառապաշարով, քերականությամբ և շարահյուսությամբ հայ գրողների ստեղծագործություններից և լեզվական իմացությունն ամրապնդող առաջադրանքներից կազմված պատկերազարդ ձեռնարկները, որոնք միևնույն ժամանակ տեղեկություն են տալիս հայ մշակույթի ու պատմության, Հայաստանի աշխարհագրության ու կենցաղի մասին.

2) լեզվական համապատասխան մակարդակ ապահովող բառապաշարը ստուգող առցանց բառարանները (vocabulary tests).

3) հայերենի նախնական մակարդակն ապահովող լեզվի ուսուցման, ստուգման և գնահատման հեռախոսային հավելվածները:

11. Ծրագիրն իրականացնում են ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Լեզվի կոմիտեն:

Հավելված 2.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 26-ի N 31-Լ հրամանի

ՀԱՅԵՐԵՆԸ ՈՉ ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄ, ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԾՐԱԳՐԻ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Հ/Հ	ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂԸ	ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ
1.	2.	3.	4.	5.	6.
2024 ԹՎԱԿԱՆ					
1.	2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ (ապրիլ-հունիս)				
1.1	Եվրոպական Միության՝ լեզուների ուսուցման, ստուգման և գնահատման ընդհանուր շրջանակի (CEFR)* և հայաստանյան նախընթաց փորձի ուսումնասիրություն	Հավաքել և վերլուծել Եվրոպական Միության՝ լեզուների իմացության ու գնահատման ընդհանուր շրջանակի (CEFR) և հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգ մշակելու հայաստանյան նախընթաց փորձը	ապրիլ	Մասնագիտական խումբ	Ուսումնասիրության արդյունքում արված վերլուծություն, գնահատում

	*https://www.coe.int/en/web/common-european-framework-reference-languages/home				
1.2	Հայերենի իմացության մակարդակների (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) չափորոշիչների մշակում՝ հիմք ընդունելով Եվրոպական Միության՝ Լեզուների իմացության ու գնահատման ընդհանուր շրջանակի (CEFR) վերջին տարբերակը և հաշվի առնելով հայերենի առանձնահատկությունները	Մշակել հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2) մակարդակների նկարագրիչները, որոնք ուրվագծում են հայերեն կարդալու, գրելու, խոսելու և լսելու անհրաժեշտ լեզվական իմացության շրջանակը	մայիս-հունիս	Մասնագիտական խումբ	Հայերենի իմացության Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2) մակարդակների չափորոշիչների առաջարկներ
1.3	Հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգի էլեկտրոնային հարթակի ստեղծման նախնական քննարկում	Մասնագիտական խմբի հետ քննարկել և համաձայնեցնել հայերենի իմացության Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2) չափորոշիչների թվային կիրառելիության հարցերը	հունիս	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	Հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգի

					Էլեկտրոնային հարթակի ստեղծման նախնական առաջարկ
1.4	Լեզուների ուսուցման, ստուգման և գնահատման համակարգի ներդրման միջազգային փորձի ուսումնասիրություն	Ծանոթանալ լեզուների ուսուցման, ստուգման և գնահատման համակարգի ստեղծման և ներդրման միջազգային մեխանիզմներին	ապրիլ- հունիս	Լեզվի կոմիտե	Ուսումնասիրության ընթացքում արված վերլուծություն
1.5	Եռամսյակի ամփոփում	Կատարված աշխատանքի վերլուծություն, ի հայտ եկած խնդիրների քննարկում	հունիսի 3-րդ տասնօրյակ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Լեզվի կոմիտե Մասնագիտական խմբի ղեկավար	Հաշվետվություն

2.	<p style="text-align: center;">2-ՐԴ ԵՌԱՄՅԱԿ (հուլիս-սեպտեմբեր)</p>				
2.1	<p>Հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների չափորոշիչների մշակում</p>	<p>Ամփոփել հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների նկարագրիչների մշակման աշխատանքը</p>	հուլիս-օգոստոս	Մասնագիտական խումբ	<p>Հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների չափորոշիչները նկարագրող փաստաթուղթ</p>
2.2	<p>Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների գնահատման սանդղակի մշակում և յուրաքանչյուր հմտությունը ստուգող առաջադրանքներին տրվող կշռի սահմանում</p>	<p>Մշակել հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների գնահատման սանդղակը և սահմանել յուրաքանչյուր հմտությունը ստուգող առաջադրանքներին տրվող կշիռը՝ ըստ հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների չափորոշիչների</p>	օգոստոս-սեպտեմբեր	Մասնագիտական խումբ	<p>Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների գնահատման սանդղակը նկարագրող փաստաթուղթ</p>
2.3	<p>Հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման</p>	<p>Մշակել և քննարկման ներկայացնել հայերենի ուսուցման, ստուգման և</p>	սեպտեմբեր	Կրթական տեխնոլոգիաների	<p>Հայերենի ուսուցման,</p>

	համակարգի էլեկտրոնային հարթակի հայեցակարգի քննարկում	գնահատման համակարգի էլեկտրոնային հարթակի հայեցակարգը		ազգային կենտրոն Լեզվի կոմիտե	ստուգման և գնահատման համակարգի էլեկտրոնային հարթակի ստեղծման հայեցակարգ
2.4	Հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման հարցաշարերը կազմող խմբերի ստեղծում	Ստեղծել հայերենի իմացության տարբեր մակարդակների համար առաջադրանքներ կազմող մասնագիտական խումբ(եր)	սեպտեմբեր	Մասնագիտական խմբի ղեկավար Լեզվի կոմիտե	Ձևավորված խումբ(եր)
2.5	Կազմակերպությունների լիցենզավորման կարգի և ծրագրի գործարկման հետ կապված օրենսդրական փաթեթի մշակում	Մշակել պետական և ոչ պետական կազմակերպություններին հայերենի իմացությունն ուսուցող, ստուգող և գնահատող համակարգը գործարկման տրամադրելու լիցենզավորման կարգը	հուլիս- սեպտեմբեր	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Լեզվի կոմիտե	Օրենսդրական փաթեթ

2.6	Եռամսյակի ամփոփում	Կատարված աշխատանքի վերլուծություն, ի հայտ եկած խնդիրների քննարկում	սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Լեզվի կոմիտե Մասնագիտական խմբի ղեկավար	Հաշվետվություն
3.	4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ (հոկտեմբեր-դեկտեմբեր)				
3.1	Ըստ հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող համակարգի չափորոշիչների յուրաքանչյուր հմտությունն ստուգող առաջադրանքների տիպերի մշակում	Նկարագրել ինչ տիպի կարող են լինել հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակներից յուրաքանչյուրի դեպքում կարդալու, գրելու, խոսելու և լսելու կարողություններն ստուգող առաջադրանքները	հոկտեմբեր	Մասնագիտական խումբ	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող տիպային առաջադրանքները նկարագրող փաստաթուղթ

	<p>1) հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակներից յուրաքանչյուրը բնորոշող կարդալու, գրելու, խոսելու և լսելու կարողությունն ստուգող մեկական տիպային առաջադրանքի մշակում</p> <p>2) յուրաքանչյուր տիպային առաջադրանքին տրվող գնահատման կշռի մշակում</p>	<p>Կազմել հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակներն ուսուցող, ստուգող և գնահատող ու կարդալու, գրելու, խոսելու և լսելու կարողությունը բնորոշող տարբեր առաջադրանքների մեկական նմուշ՝ ըստ մշակված տիպերի</p> <p>Սահմանել յուրաքանչյուր տիպային առաջադրանքին տրվող կշիռը</p>			<p>Տիպային առաջադրանքների նմուշներ</p> <p>Յուրաքանչյուր տիպային առաջադրանքի կշիռը սահմանող փաստաթուղթ</p>
3.2	<p>Առաջադրանքները կազմող խմբ(եր)ի վերապատրաստում</p>	<p>Առաջադրանքները պատրաստող խմբ(եր)ին ծանոթացնել չափորոշիչներին, ըստ չափորոշիչների առաջադրանքները մշակելու եղանակներին</p>	<p>նոյեմբեր</p>	<p>Լեզվի կոմիտե</p> <p>Մասնագիտական խումբ</p>	<p>Աշխատարան-հանդիպումներ</p>

3.3	Ծրագրի շրջանակում օգտագործվող և հետագայում շրջանառվող հիմնական հասկացությունների բառարանի մշակում (հայերեն-անգլերեն-ռուսերեն)	Ի մի բերել հայերենի իմացությունն ուսուցող, ստուգող և գնահատող չափորոշիչներում, գնահատման համակարգում ստեղծված/թարգմանված հասկացությունները, տալ դրանց բացատրությունները և կազմել եռալեզու բառարան	դեկտեմբեր	Մասնագիտական խումբ	Եռալեզու բառարան
3.3	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների մշակում	Մշակել հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների համար հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքներ	դեկտեմբեր	Մասնագիտական խմբի ղեկավար Առաջադրանքները մշակող խումբ	1000 առաջադրանք
3.4	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքներն էլեկտրոնային համակարգում ներդնելու եղանակների մշակում	Մշակել հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքները էլեկտրոնային համակարգում ներդնելու եղանակներ	նոյեմբեր	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն Լեզվի կոմիտե	Էլեկտրոնային հարթակի նախնական առաջարկ

3.5	Կազմակերպությունների լիցենզավորման կարգի և ծրագրի գործարկման հետ կապված օրենսդրական փաթեթի մշակում	Մշակել պետական և ոչ պետական կազմակերպություններին հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող համակարգը գործարկման տրամադրելու լիցենզավորման կարգը	հոկտեմբեր-դեկտեմբեր	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Լեզվի կոմիտե	Օրենսդրական փաթեթ
3.6	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների ու հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների չափորոշիչների համապատասխանությունը գնահատող փորձաքննություն	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների ու հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների չափորոշիչները փորձաքննության ուղարկել լեզվական իմացությունն ուսուցող, ստուգող և գնահատող փորձ ունեցող տեղական և միջազգային կազմակերպություններ	դեկտեմբեր	Լեզվի կոմիտե	Փորձագիտական եզրակացություն
3.7	Եռամսյակի ամփոփում	Կատարված աշխատանքի վերլուծություն, ի հայտ եկած խնդիրների քննարկում	դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ	Կրթության, գիտության, մշակույթի և	Հաշվետվություն

				<p>սպորտի նախարարություն</p> <p>Լեզվի կոմիտե</p> <p>Մասնագիտական խմբի ղեկավար</p> <p>Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն</p>	
--	--	--	--	---	--

2025 ԹՎԱԿԱՆ

4. 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿ
(հունվար-մարտ)

4.1.	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների մշակում	Մշակել հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների համար հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքներ	հունվար-մարտ	<p>Մասնագիտական խմբի ղեկավար</p> <p>Հայերենի ուսուցող, ստուգող և</p>	3000 առաջադրանք
------	--	--	--------------	--	-----------------

				գնահատող առաջադրանքները մշակող խումբ(եր)	
4.2	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող կայքի ստեղծում և առաջադրանքների զետեղում կայքում	Ստեղծել հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող կայք	հունվար-փետրվար	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	Կայք 4000 առաջադրանք
4.3	Ծրագրի գործարկման մեխանիզմների մշակում	Մշակել ծրագրի գործարկման կարգը	հունվար-փետրվար	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Լեզվի կոմիտե	Ծրագրի գործարկման կարգ
4.4	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների ու հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2),	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների ու հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների չափորոշիչները	հունվար	Լեզվի կոմիտե	Փորձագիտական եզրակացություն

	Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների չափորոշիչների համապատասխանությունը գնահատող փորձաքննություն	փորձաքննության ուղարկել լեզվական իմացությունն ուսուցող, ստուգող և գնահատող փորձ ունեցող տեղական և միջազգային կազմակերպություններ			
4.5	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների և կայքի փորձարկում	Ստեղծված կայքը փորձարկել ոչ հայախոս խմբերում հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակներն ստուգելու նպատակով	մարտ	Լեզվի կոմիտե	Արդյունքների վերլուծություն
4.6	Եռամսյակի ամփոփում	Կատարված աշխատանքի վերլուծություն, ի հայտ եկած խնդիրների քննարկում	մարտի 3-րդ տասնօրյակ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Լեզվի կոմիտե Կրթական տեխնոլոգիաների	Հաշվետվություն

				ազգային կենտրոն	
				Մասնագիտական խմբի ղեկավար	
5.	2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ (ապրիլ-հունիս)				
5.1	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների մշակում	Մշակել հայերենի իմացության (Ա1 (A1), Ա2 (A2), Բ1 (B1), Բ2 (B2), Գ1 (C1), Գ2 (C2)) մակարդակների համար հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքներ	ապրիլ-մայիս	Մասնագիտական խմբի ղեկավար Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքներ ը մշակող խումբ(եր)	2000 առաջադրանք
5.2	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների զետեղում կայքում	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքների զետեղում կայքում	մայիս	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	2000 առաջադրանք

5.3	Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող համակարգի աշխատանքների ամփոփում	Վերլուծել կատարված աշխատանքները, բացահայտել խնդիրները և առաջարկել լուծումներ	հունիս	Մասնագիտական խմբի ղեկավար Հայերենի ուսուցող, ստուգող և գնահատող առաջադրանքներ ը մշակող խումբ(եր) Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	6000 առաջադրանք
5.4	Համակարգից օգտվելու ուղեցույցի մշակում	Մշակել համակարգից օգտվելու ուղեցույցը	ապրիլ-մայիս	Լեզվի կոմիտե Կրթական տեխնոլոգիաների	Համակարգից օգտվելու ուղեցույց

				ազգային կենտրոն	
5.5	Հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգի միջազգային փորձաքննություն	Գործող համակարգն ուղարկել միջազգային փորձաքննության	մայիս	Լեզվի կոմիտե	Փորձագիտական եզրակացություն
5.6	Հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգով հայերենի դասընթաց և հայերենի իմացությունն ստուգող և գնահատող քննություններ իրականացնող հաստատությունների լիցենզավորման մեկնարկ	«Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով մեկնարկել հայերենի ուսուցման, ստուգման և գնահատման համակարգով հայերենի իմացությունը ստուգող և գնահատող քննություններ իրականացնող հաստատությունների լիցենզավորումը	մայիս-հունիս	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Համակարգից օգտվելու կարգի մասին տեղեկատվություն ԶԼՄ-ներով և հաղորդակցության այլ հարթակներով
5.7	Ծրագրի ամփոփիչ հաշվետվություն	Կատարված աշխատանքի ամբողջական վերլուծություն	հունիս	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Հաշվետվություն

				Լեզվի կոմիտե Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն Մասնագիտական խմբի ղեկավար	
--	--	--	--	---	--

ՀԱՅԵՐԵՆԸ ՈՉ ՀԱՅԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԾՐԱԳԻՐԸ ՄՇԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Դավիթ Գյուրջինյան - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար (մասնագիտական խմբի ղեկավար)
2. Նարինե Հեքեքյան - բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի դասախոս
3. Արմինե Կոստանդյան - բանասեր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի դասախոս, Կրթության զարգացման և ազգային նորարարությունների կենտրոնի փորձագետ
4. Հասմիկ Հովհաննիսյան - բանասեր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ավագ դասախոս, Երևանի Ա. Ս. Պուշկինի անվան հմ.Ց հիմնական դպրոցի ուսուցիչ